

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԵՈՐՁ

Ի. Ս. ԲԱԼՏԱՆ

Հասարակության քաղաքական կայունությունը քաղաքական գիտության ամենահրատապ, կիրառական նշանակություն ունեցող հիմնահարցերից է: Այսօր հասարակական, քաղաքական կյանքում կարևոր դեր է հատկացվում այս խընդրին, և շատ մասնագետներ ու պետական գործիչներ այն համարում են հասարակության կայուն զարգացման անհրաժեշտ պայման: Քաղաքական պրակտիկայում հաճախ չափազանցվում են կայունության դերն ու նշանակությունը և չափից ավելի բացասական վերաբերմունք դրսևորում անկայունության հանդեպ: Իրականում նման մոտեցումը միշտ չէ որ ճիշտ է, քանի որ բարեփոխումների փուլում գտնվող երկրներում կարող են նաև անկայունության իրավիճակներ ստեղծվել: Քննարկվող հիմնահարցը խորությամբ ընկալելու համար պարզաբանենք, թե ինչ ենք հասկանում հասարակության քաղաքական կայունություն ասելով: «Քաղաքական կայունությունը քաղաքական սուբյեկտների միջև կապերի համակարգ է. որին բնորոշ են որոշակի ամբողջականություն և իր գործառույթների արդյունավետ իրականացում»¹:

Ամերիկյան հայտնի քաղաքագետ Ա. Լեյփհարթը, խոսելով քաղաքական կայունության մասին, նշում է, որ այն նույնքան բարդ և բազմիմաստ հասկացություն է, որքան ժողովրդավարությունը, և տալիս է քաղաքական կայունության հետևյալ սահմանումը. «Քաղաքական կայունությունն իր մեջ պարունակում է համեմատական քաղաքագիտության մեջ օգտագործվող հետևյալ հասկացությունները՝ համակարգի պահպանում, քաղաքացիական կարգ ու կանոն, լեգիտիմություն ու արդյունավետություն»² (ընդգծ. իմն է - Ի. Բ.): Նա համակարգի կայունության համար կարևոր է համարում վարչակարգի ժողովրդավարական որակի պահպանման և նրա կառուցվածքային տարրերի վերարտադրման հաջող գործընթացը: Նման դեպքում համակարգը աչքի է ընկնում հարկադրական մեթոդների կիրառման ցածր և լեգիտիմության բարձր մակարդակով, զգալիորեն բարձրանում է որոշումների ընդունման և իրականացման արդյունավետությունը:

Հասարակության քաղաքական կյանքը զանազան գործընթացների ամբողջություն է, որոնց կարգավորումը տվյալ համակարգի կարևոր գործառույթներից է: Քաղաքական կայունությունը հասարակության քաղաքական կյանքի բնութագրությունն է. վիճակը, որը դրսևորվում է ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ քաղաքական ինստիտուտների գործունեության մեջ: Քաղաքական կայունությունը տվյալ համակարգի ընդունակությունն է երկար ժամանակահատվածում առանց կտրուկ փոփոխությունների գործառել և պահպանել իր ամբողջականությունը: Քաղաքական կայունությունը քաղաքականության սուբյեկտների միջև փոխհարաբերությունների համակարգ է, որն ունի դրսևորման ներքաղաքական, մարզային և միջազգային մակարդակներ: Քննարկվող հիմնախնդիրը վերաբերում է ներքաղաքական կայունությանը, որի հիմնական դերակատարներն են պետությունը և հասարակությունը: Ներքաղաքական կայունությունը հասարակության մեջ դրսևորվում է երկու ձևով՝ մոբիլիզացիոն և

¹ «Политология. Энциклопедический словарь». М., 1993, с. 281.

² А. Лейпхарт. Демократия в многосоставных обществах. М., 1997, с. 38-39.

ավտոնոմ (ինքնակա)³: Մոբիլիզացիոն կայունությունը բնորոշ է փակ համակարգերին, որտեղ զարգացման նախաձեռնությունը սկսվում է վերևից, երբ կառավարող քաղաքական ուժերի կողմից հասարակությունը մոբիլիզացվում է որոշակի նպատակներ իրականացնելու համար: Բանն այն է, որ այդպիսի համակարգերում կայունությունը ժամանակավոր և արտաքին բնույթ է կրում, որը ձևավորվում, ստեղծվում է մեծ մասամբ վարչական մեթոդներով ու բացահայտ հարկադրանքի ձևով: Մոբիլիզացիոն քաղաքական կայունության կենսագործունեությանն ռեսուրս կարող են լինել ռեժիմի գործունեության մեթոդները և միջոցները, քաղաքական առաջնորդի ֆիզիկական ու հոգևոր ներուժը, հասարակության սոցիալական լարվածության աստիճանը, հակակառավարական քաղաքական կոալիցիաների առկայությունը և այլն: Այդպիսի համակարգերում հակասությունները, խցանումները ոչ թե ինքնըստիճյան, այլ կառավարող ուժերի կողմից են նպատակաշին ձևով կարգավորվում:

Ինքնակա քաղաքական կայունության դեպքում հասարակությունը հենվում է ինքնուրույն սուբյեկտների վրա՝ որպես ակտիվության աղբյուրների: Այդպիսի համակարգերում հասարակական հարաբերությունները կարգավորվում են ներքևից վերև, որտեղ կարգավորման մեխանիզմները գործում են սուբյեկտների բազիսային հարաբերությունների մակարդակի վրա: Քաղաքական հարաբերությունները բխում են օրենքներից և ընդգրկում են երկրի արմատական շահերը: Նման կայունության դեպքում բարեփոխումները դառնում են հաստատուն և մորմիտումների իրականացման անհրաժեշտ պայման: Հասարակությունը զարգանում է ոչ թե հեղափոխական, այլ էվոլյուցիոն ճանապարհով, որտեղ կայունությունը հասարակության բնականոն զարգացման արդյունք է: Ստեղծվում է իշխանությունների և հասարակության փոխհամագործակցություն, անխափան գործում է հետադարձ կապի օրենքը, որում դրսևորվում է համակարգի կայունության և որոշումների ընդունման արդյունավետության աստիճանը: Իրականացվող բարեփոխումները բացում են հասարակության խցանումները և բարենպաստ պայմաններ ստեղծում զարգացման համար: Ժողովրդավարությունը դառնում է կայուն ավանդույթ և քաղաքական արժեք:

Ներքաղաքական կայունությունն ապահովելու համար էական է հասարակության մեջ գոյություն ունեցող իրավական և քաղաքական նորմերի պահպանումը, կոնֆլիկտային իրադրության խաղաղ լուծումը և այլն: Անհրաժեշտ է տարբերակել քաղաքական կայունությունը լճացումից, անշարժությունից, երբ հասարակության քաղաքական կյանքի շարժընթացը դանդաղում է, զարգացումը փաստորեն կանգ է առնում: Քաղաքական կայունության հակապատկերը քաղաքական անկայունությունն է, որի ժամանակ մշտապես լինում են սոցիալական սուր բախումներ, որոնք խոչընդոտում, արգելք են դառնում երկրի բնականոն զարգացման ճանապարհին:

Հասարակության կայունության խախտման գործոններ կարող են լինել քաղաքական վերնախավի տարբեր խմբերի միջև իշխանության համար մղվող սուր պայքարը, միջէթնիկական և մարգային կոնֆլիկտները, ընդդիմության չափից ավելի ակտիվացումը, զինված պայքարի միջոցով վարչաձևի փոփոխությունը և այլն, որոնք շատ դեպքերում կարող են վտանգել պետական անվտանգությունը:

Կայունության խախտումը կարող է լինել իրավիճակային, երբ նրա վերացումը, հաղթահարումը տեղի է ունենում տվյալ քաղաքական համակարգի ոչ արմատական, որակական փոփոխությունների շրջանակներում: Անկայունությունը կարող է լինել խորքային, երբ ստեղծվում է ամբողջ համակարգի արմատական փոփոխության անհրաժեշտություն: Հասարակության մեջ անկայունությունն սկսվում է

³ Տե՛ս «Словарь-справочник. Политология», М., 2000, էջ 273:

ոչ այնքան զանգվածների դժգոհությունից, որքան կառավարող վերնախավի ճգնաժամից: Ինչպես նշեցի՞մք, արդիականացման փուլում գտնվող հասարակություններում կարող են տեղի ունենալ քաղաքական անկայունության դրսևորումներ: Ուստի, երբ կայունության և անկայունության հարցը քննարկում ենք հասարակության արդիականացման տեսանկյունից, ապա պետք է հաղթահարել տարածված որոշ կաղապարային գաղափարներ: Բանն այն է, որ նախկին համակարգում ինչպես հասարակական գիտության, այնպես էլ լայն հասարակության շրջանակներում երկար ժամանակ իշխում էր այն կարծիքը, որ յուրաքանչյուր հասարակության լավագույն վիճակը նրա հավասարակշռությունն ու կայունությունն է, երբ չկան հակասություններ, խորը ճգնաժամեր և այլն: Այլ խոսքով, անկայունության որևէ դրսևորում, կայունությունից շեղում համարվում էր այդ հասարակության հիվանդության կամ անկատարության նշան: Սակայն գերմանացի սոցիոլոգներ Գ. Զիմելի և Ռ. Դարենդորֆի ստեղծած կոնֆլիկտների նոր տեսությունն ըստ էության փոխեց այդ հիմնահարցերի մասին պատկերացումները: Քաղաքական պրակտիկան ցույց տվեց, որ հասարակությունն իր զարգացման ընթացքում չի կարող չունենալ թե՛ կայունության և թե՛ անկայունության պահեր: Հետևաբար այդ երկու իրավիճակներից որևէ մեկի բացարձակացումը հավասարապես կործանարար է տվյալ համակարգի համար: Փակ հասարակության մեջ կառավարող քաղաքական ուժերը պայքարում են հակասությունների դրսևորման միտումների դեմ, այդ նպատակով ստեղծում են հատուկ մեխանիզմներ մշտական հավասարակշռություն, կայունություն պահպանելու համար: Այլ կերպ ասած՝ տոտալիտար ռեժիմների ժամանակ քաղաքական կայունությունը դիտվում է որպես կենտրոնական նպատակ և արժեք: Ընդ որում, ստեղծվում են ոչ միայն սոցիալական հակասությունների սուբլիմացման, այլև քաղաքական համակարգի կառուցվածքների տոտալիտարացման յուրահատուկ մեխանիզմներ: Նման դեպքում ստեղծվում է սոսկ արտաքին, թվացյալ քաղաքական կայունություն, որովհետև հասարակության մեջ գործող ընդդիմադիր տարրերը թեև ձևակաևորեն քշվում են մի անկյուն, սակայն, շարունակում են գործել: Մինչդեռ բաց, ժողովրդավարական համակարգերում հակասական տարրերը ոչ միայն չեն ճնշվում, դուրս չեն մղվում, այլև ստանալով գործելու ազատություն՝ դառնում են զարգացման խթանիչ ուժեր: Նկատի ունենալով հենց այդ համակարգերը՝ Թ. Պարսոնը նշում է. «Կախված հասարակության ծավալից և բարդությունից՝ նրանում զարգանում է պետական հաստատությունների ճյուղավորված համակարգ՝ չխախտելով կառավարման քաղաքական (ընտրովի) և բյուրոկրատական բաղադրամասերի միջև առկա հավասարակշռությունը»⁴: Քաղաքական համակարգի արդյունավետ գործունեության համար կարևոր նշանակություն ունի իշխանության ապակենտրոնացման խնդրի լուծումը: Ինչպես ցույց է տալիս քաղաքական պրակտիկան, կառավարման չափից ավելի կենտրոնացումը լուրջ խոչընդոտ է իշխանության մարմինների արդյունավետ գործունեության համար: Ուստի անցումային փուլում գտնվող երկրներում քաղաքական կայունություն ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել քաղաքական համակարգի այնպիսի ինստիտուտներ, որոնք ոչ միայն չպետք է խանգարեն ժողովրդավարական բարեփոխումների իրականացմանը, այլև, ընդհակառակը, պետք է նպաստեն քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացմանը:

Քաղաքական կայունությունը նշանակում է հասարակության քաղաքական զարգացման ապահովում, որն առաջին հերթին պայմանավորված է երկրի տնտեսական զարգացման մակարդակով: Քաղաքական զարգացումը հասարակության անցումն է հին համակարգից դեպի նորը, քաղաքական համակարգի

⁴ Т. Парсонс. Система современных обществ. М., 1998, с.137.

ընդունակությունն է մշտապես և արդյունավետ հարմարվելու հասարակական կյանքի փոփոխություններին: Սակայն քաղաքական զարգացումը չպետք է նույնացնել քաղաքական առաջադիմության հետ: Քաղաքական զարգացումն ավելի չեզոք հասկացություն է, որը նկարագրում է գործընթացը և ոչ թե արդյունքը: Քաղաքական զարգացումները, ընթանալով բարդ ու հակասական ձևերով, կարող են ունենալ տարաբնույթ դրսևորումներ. լինել առաջադիմական, երբ անցում է կատարվում ցածրից բարձրին, հետադիմական, երբ զարգացումն ընթանում է հակառակ ուղղությամբ՝ բարձրից ցածրին, և հորիզոնական, երբ փոփոխությունը տեղի է ունենում միաշերտ, որն ընդգրկում է քաղաքական համակարգի կառուցվածքային տարրերից միայն մեկը:

Այսպիսով, ելնելով վերն ասվածից, կարող ենք եզրակացնել, որ հասարակության ներքաղաքական կայունության ապահովման համար կարևոր նշանակություն ունեն մի շարք գործոններ, որոնցից առավել նշանակալից են իշխանությունների լեգիտիմությունը, երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, կառավարման արդյունավետությունը, քաղաքական գործընթացների ինստիտուցիոնալացման մակարդակը և այլն:

И. С. БАЛЯН - К вопросу о политической стабильности. - В статье анализируется понятие структуры и формы проявления стабильности. Приводятся основные характеристики политической стабильности. Стабильность и нестабильность это определенное состояние общества. По мнению автора, преувеличение значения одной из этих сторон может привести к нежелательным последствиям. Подчеркиваются основные факторы внутривполитической стабильности: легитимность власти, социально-политическое и социально-экономическое состояние общества, эффективность управления и рациональность принятых политических решений, уровень политической институционализации и т. д.